| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 1 | Ուսուցչուհին գրատախտակին գրեց երկվանկ բառերի առաջին վանկերը՝ *մո-, տա-, զա-,* և երկրորդ վանկերը՝ *-տիկ, -րի*: Ամենաշատը քանի՞ բառ ստացավ Արշակը՝ առաջին վանկերը միացնելով երկրորդներին:<br><br>*Ա.* 2<br>*Բ.* 3<br>*Գ.* 4<br>*Դ.* 5<br>*Ե.* 6 | Դ | 5 |
| 2 | Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն, որ փակագծերից ձախ և աջ գրված բառերի հետ կազմի նոր բառեր:<br><br>քար (  ղջյուր<br><br>*Ա.* ափ<br>*Բ.* մաղ<br>*Գ.* այծ<br>*Դ.* պոչ<br>*Ե.* ագի | Գ | այծ |

|  | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 3 | Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել բերված տառաշարով.<br><br>**Մեննէչղատունույունայրվեվմենրեցոուհիթոէ**<br><br>*Ա.* Մեղանչելը լավ բան չէ:<br>*Բ.* «Մեղուն» լավ մրցույթ է:<br>*Գ.* Մարզվելը մարմինը կոփում է:<br>*Դ.* Մեղուները թռչում են ծաղկից ծաղիկ:<br>*Ե.* Մրցույթում ուժեղը հաղթում է: | Բ | «Մեղուն» լավ մրցույթ է: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 4 | Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:<br><br>*էթէ — 5*<br>*տուն — 4*<br>*շունչ — 5*<br>*որդ — 5*<br>*տունկ —* <br><br>*Ա.* 3<br>*Բ.* 4<br>*Գ.* 5<br>*Դ.* 6<br>*Ե.* 7 | Գ | 5 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 5 | *Ա-ն դնես ձախում*<br>*Ու ձախից կարդաս՝*<br>*Համով է, անգին:*<br>*Ա-ն դնես աջում*<br>*Ու աջից կարդաս՝*<br>*Կղեղնի այգին:*<br><br>*Ա.* նուշ<br>*Բ.* հավ<br>*Գ.* վար<br>*Դ.* շուն<br>*Ե.* պար | Ա | նուշ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 6 | • Եփած ____________ ծիծաղը կգա<br>• ____________ ականջում քնած<br>• ____________ բանջարանոց թողնել<br>• ____________ գլխին ավետարան կարդալ<br><br>Տարբերակներում պատկերված կենդանիներից ո՞րը չի կարող տեղ զբաղեցնել բերված դարձվածքներից ոչ մեկում:<br><br> | Դ | Շունը |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 7 | Պատասխանի տարբերակները, բացի մեկից, նույն ընտանիքի բառեր են: Ո՞րն է օտարը:<br><br>*ագահ, անկուշտ, անհագ, ընչաքաղց, ընչամոլ, ընչացք, ընչասեր*<br><br>*Ա.* ընչաքաղց<br>*Բ.* ընչացք<br>*Գ.* ընչամոլ<br>*Դ.* ընչասեր<br>*Ե.* ագահ | Բ | ընչացք |
| 8 | Պատասխանի տարբերակներից ո՞րը կտրելով և *է* ավելացնելով կարող ենք միտք ստանալ:<br><br>*Ա.* սակավ<br>*Բ.* անձավ<br>*Գ.* քարակոփ<br>*Դ.* պախուրց<br>*Ե.* սաղարթ | Ա | սակավ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 9 | Բառազույգերը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:<br><br>*ավարտ — արտաղրանք*<br>*պատրանք — անքնություն*<br>*վարկած —* <br>*կարկուտ — կուտակում*<br>*ծիածան — ծանծաղուտ*<br><br>*Ա.* ծակոտկեն<br>*Բ.* կրծոտել<br>*Գ.* ծրար<br>*Դ.* կարծիք<br>*Ե.* կածան | Ե | կածան |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 10 | *Հույզ, կեզ, սեր, հատ, սույլ, սուր, երգ* բառերից ո՞րը չկարողացավ գնալ -*իչ*-ի տուն։<br><br>*Ա.* սեր<br>*Բ.* սույլ<br>*Գ.* երգ<br>*Դ.* սուր<br>*Ե.* հատ | Ա | սեր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 11 | Իմաստ արտահայտող բառեր ստանալու համար ծաղկի փոխարեն ընդամենը քանի՞ հատ միննույն տառից պետք է դնել:<br><br>*ու❀արկել, ու❀որդել, ու❀ել, ու❀եկցել, ու❀անկյուն, ու❀ի, ու❀իչ, ու❀եզրություն, ու❀էչափ*<br><br>*Ա.* 9<br>*Բ.* 10<br>*Գ.* 11<br>*Դ.* 12<br>*Ե.* 13 | Ե | 13 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 12 | ***Շատակեր, աշակերտ, ատրաշեկ, կետաշար*** բառերը մտերիմ ընկերներ են: Նրանք ունեն ևս մեկ մտերիմ ընկեր: Ո՞ր բառն է դա:<br><br>*Ա.* շարական<br>*Բ.* կերաշատ<br>*Գ.* աշտարակ<br>*Դ.* եռաշերտ<br>*Ե.* աշտանակ | Բ | կերաշատ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 13 | Ո՞ր տարբերակի բառը կօգնի *հոր, ցան, միս, ուղի, փոշի, զարի, անձրև, մեղր, աղ, ոսկի, ծաղիկ, արջ, հեղեղ, շուն, առատ* բառերին նորանալու, նոր կյանք ստանալու:<br><br>*Ա.* գայլ<br>*Բ.* քար<br>*Գ.* ջուր<br>*Դ.* սունկ<br>*Ե.* գետ | Գ | ջուր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 14 | Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:<br><br>ՊԱՏ + ՊԱՏ + ՊԱՏ + ՊԱՏ = ՏՈՒՆ<br><br>Ա. 145 + 145 + 145 + 145 = 580<br>Բ. 245 + 245 + 245 + 245 = 930<br>Գ. 146 + 146 + 146 + 146 = 584<br>Դ. 154 + 154 + 154 + 154 = 670<br>Ե. 162 + 162 + 162 + 162 = 648 | Ա | 145<br>+<br>145<br>+<br>145<br>+<br>145<br>580 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 15 | Ի՞նչ տառակապակցություն պետք է գրել մեղվիկի փոխարեն։<br><br>*ԱԺՃՌ* *ԲԻՄՄ* *ԳԼՅՎ* ,<br><br>*Ա.* ԱՌԲՍ<br>*Բ.* ԺՃԻՄ<br>*Գ.* ԴԽՆՏ<br>*Դ.* ԴԵԸՐ<br>*Ե.* ՎՅԵԾ | Գ | ԴԽՆՏ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 16 | Տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է զուրկ այդ հատկությունից:<br><br>*Ա.* թամբակալ<br>*Բ.* ղեկավար<br>*Գ.* աղբահոր<br>*Դ.* կաթոզին<br>*Ե.* այգետունկ | Դ | կաթոզին |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 17 | Երեխաները գրականության դասին խաղ էին խաղում: Նրանք անվանում էին ստեղծագործությունների այնպիսի հերոսների, որոնց անունները սկսվում են նույն տառերով, ինչ իրենց անուններն են՝ Գևորգ Մարզպետունի, Թոմ Սոյեր, Զախորդ Փանոս, Մերի Փոպինս, Ռոբինզոն Կրուզո: Երեխաներից ո՞վ խախտեց խաղի կանոնը:<br><br>*Ա.* Գայանե<br>*Բ.* Թամար<br>*Գ.* Զյունիկ<br>*Դ.* Մինաս<br>*Ե.* Ռազմիկ | Գ | Զյունիկ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 18 | Ի՞նչ բառ է ծածկագրվել նկարելուկով:<br>*2640*<br>*Ա.* սար<br>*Բ.* սունկ<br>*Գ.* սուրճ<br>*Դ.* սոխ<br>*Ե.* սուր | Դ | սոխ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 19 | ***Գալարել, կլանել, անպատվել, հավանել, անջատել*** բառաշարքի բառերը միևնույն օրինաչափությամբ կորցրին երկուական տառ և նոր տեսք ստացան: Պատասխանի տարբերակներից ո՞րը չենթարկվեց այդ օրինաչափությանը:<br><br>*Ա.* անջատել<br>*Բ.* հավանել<br>*Գ.* կլանել<br>*Դ.* գալարել<br>*Ե.* անպատվել | Ա | անջատել |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 20 | Հայկը միևնույն օրինաչափությամբ գրել է երկու կոտորակ: Հասկանալով այդ օրինաչափությունը՝ գտի՛ր մեղվիկի թաքցրած բառը:<br><br>**կառապան** / **առակ**<br>**կարեկից** / <br><br>*Ա.* պնակ<br>*Բ.* կրակ<br>*Գ.* երակ<br>*Դ.* կրիա<br>*Ե.* ցինկ | Գ | երակ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 21 | Տաճատը, Աննան, Ալլան, Միսը, Արան ու Սոսը խաղում էին: Նրանց մոտեցան Նազանը, Վարդուհին, Շողերը, Սարգիսը, Անդրանիկն ու Գևորգը և խնդրեցին միանալ: Սակայն խաղացող երեխաները կարող էին ընտրել միայն մեկին: Ո՞վ ընտրվեց:<br><br>*Ա.* Գևորգ<br>*Բ.* Շողեր<br>*Գ.* Վարդուհի<br>*Դ.* Սարգիս<br>*Ե.* Նազան | Ե | Նազան |
| 22 | Վահանը թղթի վրա գրեց բոլոր այն բույսերի անունները, որոնք պապիկն աճեցնում էր բանջարանոցում՝ ***բազուկ, գազար, լոբի, լոլիկ, համեմ, պղպեղ, ռեհան, սխտոր, վարունգ***: Հետո նկատեց, որ բույսերից մեկի անունը մոռացել է, և ավելացրեց «ռեհան» բառից հետո: Ո՞ր բույսն էր մոռացել Վահանը:<br><br>*Ա.* սամիթ<br>*Բ.* բամիա<br>*Գ.* բողկ<br>*Դ.* սոխ<br>*Ե.* կաղամբ | Ա | սամիթ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 23 | Խաչբառի նարնջագույն վանդակներում միննույն ձայնավոր հնչյունը տեղադրելուց հետո մեղվիկի փոխարեն ո՞ր տառը պիտի ընտրես, որ ուղղահայաց բոլոր սյունակներում բառեր ստացվեն:<br><br><br>Ա. ս<br>Բ. գ<br>Գ. խ<br>Դ. ճ<br>Ե. շ | Ե | Շ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասա-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 24 | Կոտորակագիր կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մի կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ: Օրինակ՝<br><br>Ի՞նչ առած է գաղտնագրվել հետևյալ կոտորակագրում.<br><br>*Ա.* Մարդը մարդով է մարդ:<br>*Բ.* Լույսը բացվի, բարին՝ հետը:<br>*Գ.* Մի ձեռը ծափ չի տա:<br>*Դ.* Ամեն բանի վերջն է գովելի:<br>*Ե.* Աղվեսի վկան իր պոչն է: | Գ | Մի ձեռը ծափ չի տա: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 25 | *Պաղպաղակ — աղակեր — կերպար — արկած —* <br><br>Պատասխանի տարբերակներից ո՞րը պետք է դնել մեղվիկի փոխարեն:<br><br>*Ա.* ածական<br>*Բ.* կածան<br>*Գ.* առկայծում<br>*Դ.* ծիրան<br>*Ե.* կարծիք | Դ | Ծիրան |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 26 | ***Խեժապատ, կենսաբան, ծավարահատ, ճենապակի, հիշատակ*** բոլոր բառերը շարված են մի հետաքրքիր օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը պետք է լինի հաջորդը:<br><br>*Ա.* ծառատունկ<br>*Բ.* շատրվան<br>*Գ.* նավակազմ<br>*Դ.* հեռաչափ<br>*Ե.* շրջանակ | Բ | շատրվան |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 27 | Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը։<br><br>*կրպակ, սայլ, գրքամոլ, բաշխել, բարդ, գորգ,* <br><br>*Ա.* բնավ<br>*Բ.* գնդակ<br>*Գ.* գրավ<br>*Դ.* դաշտային<br>*Ե.* թյուր | Դ | դաշտային |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 28 | *Մասունք, անկրակ, լեզվանի, քներակ, կարպետ, գրպան, զարմիկ* բառաշարքը կազմված է հետաքրքրական օրինաչափություն ունեցող բառերից: Բառերից մեկը դուրս է այդ օրինաչափությունից: Այդ բառն է՝<br><br>*Ա.* մասունք<br>*Բ.* անկրակ<br>*Գ.* քներակ<br>*Դ.* կարպետ<br>*Ե.* գրպան | Ե | գրպան |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 29 | Դավիթը տառաշարի բոլոր տառերով կազմեց մի նախադասություն:<br><br>ԱԵԵԵԵԸԻՄՄՄՍՍՐՐՐՐՌՒ<br><br>Պատասխանի տարբերակներից ո՞րը կազմեց նա:<br><br>*Ա.* Սիրում եմ Մասիս սարը:<br>*Բ.* Ես սիրում եմ մեր սարերը:<br>*Գ.* Մեր սիրուն Սիսն եմ ես:<br>*Դ.* Սիրում եմ սարի մասուրը:<br>*Ե.* Սիսն ու Մասիսը սար են: | Բ | Ես սիրում եմ մեր սարերը: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 30 | Ո՞վ է այն հեքիաթի հեղինակը, որը գաղտնագրված է այս նկարելուկով.<br><br><br>Ա. Հովհաննես Թումանյան<br>Բ. Ղազարոս Աղայան<br>Գ. Աթաբեկ Խնկոյան<br>Դ. Դերենիկ Դեմիրճյան<br>Ե. Հանս Քրիստիան Անդերսեն | Ա | Հովհաննես Թումանյան |